ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

(2022 թվականի փետրվար-մարտ ամիսներին Ադրբեջանի կողմից Արցախի բնակչության իրավունքների խախտումների մասին)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ – 2022

# Բովանդակություն

Ներածություն ..... 3

Բաժին 1. Հրադադարի ռեժիմի խախտումները և քաղաքացիական բնակչության իրավունքների դեմ ոտնձգությունները ..... 5

Բաժին 2. Գազամատակարարման խափանման հումանիտար հետևանքները ..... 12

2.1 Բնակչությունը զրկված է ջեռուցումից և տաք ջրից: ..... 13

2.2 Ազդեցությունը կրթության իրավունքի վրա ..... 14

2.3 Ազդեցությունը առողջության պահպանման իրավունքի վրա ..... 15

2.4 Ազդեցությունը տնտեսական գործունեության և աշխատանքի իրավունքի վրա ..... 16

2.5 Ազդեցությունը էկոլոգիայի և աղբահանության վրա ..... 17

Բաժին 3. Հոգեբանական ահաբեկչություն և տեղեկատվական հարձակումներ..... 19

# Ներածություն

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Թուրքիայի և միջազգային վարձկանների ներգրավմամբ Ադրբեջանը ագրեսիվ պատերազմական գործողություններ է իրականացրել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ, որի ընթացքում ադրբեջանական կողմն իրագործել է բազմաթիվ պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ: Բոլոր հանցագործությունները հստակ փաստագրվել են Արցախի մարդու իրավունքների պաշտպանի կողմից պատրաստված զեկույցներում, որոնք ներկայացվել են միջազգային կազմակերպություններին, առանձին պետությունների որոշում կայացնողներին: Այդ զեկույցները հրապարակված են Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքում[1]:

2020 թվականի նոյեմբերի 9-ին Ռուսաստանի Դաշնության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ադրբեջանի Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ եռակողմ հայտարարությունը, որով դադարեցվել են լայնածավալ ռազմական գործողությունները Արցախում և խաղաղության պահպանման նպատակով տեղակայվել են ռուսական խաղաղապահ ուժեր:

Հրադադարի հաստատմանը հաջորդած գրեթե մեկուկես տարվա ընթացքում ադրբեջանական կողմը տարբեր միջոցներով ոտնձգություններ է իրականացրել Արցախի ժողովրդի իրավունքների՝ այդ թվում կյանքի և առողջության պահպանման իրավունքի, ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության նկատմամբ: Այդ գործողությունները առավել ագրեսիվ բնույթ են ստացել 2022 թվականի փետրվար-մարտ ամիսներին, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացված են սույն զեկույցի առաջին բաժնում:

2022 թվականի մարտի 8-ի՝ ժամը 01:00-ից ամբողջությամբ խափանվել է Հայաստանի Հանրապետությունից Արցախ եկող միակ գազատարի աշխատանքը, որի հետևանքով Արցախի ամբողջ բնակչությունը զրկվել է գազամատակարարումից: Տարբեր աղբյուրներից ձեռք բերված փաստերը վկայում են, որ գազատարը դիտավորյալ պայթեցվել է ադրբեջանական զինված ուժերի կողմից: Արցախում

[1] Արցախի Հանրապետության մարդու իրավուքնենրի պաշտպանի պաշտոնական կայք, արտահերթ զեկույցներ, https://artsakhombuds.am/hy/ad_hoc_reports

գազամատակարարման խափանման և դրա հետևանքով հումանիտար դժվարագույն իրավիճակ ստեղծելու ադրբեջանական ուղիղ դիտավորության մասին է խոսում նաև այն փաստը, որ ադրբեջանական կողմը մեկ շաբաթից ավելի է, չի թույլատրում տեղական գազամատակարարող կազմակերպության մասնագետների հասանելիությունը գազատարի վնասված հատված՝ վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար: Զեկույցի պատրաստման ընթացքում տեղեկություններ են ստացվել, որ ադրբեջանական կողմն սկսել է գազատարի վերականգնման ուղղությամբ աշխատանքները: Գազամատակարարման խափանման հետևանքով առաջացած հումանիտար խնդիրների ընդհանուր նկարագիրը ներկայացված է սույն զեկույցի 2-րդ բաժնում:

Տարբեր համայնքների ուղղությամբ հանցավոր գործողություններին և գազամատակարարման դիտավորյալ խափանմանը զուգահեռ ադրբեջանական կողմը հոգեբանական և քարոզչական բնույթի ահաբեկչական արշավներ է իրականացնում Արցախի ժողովրդի նկատմամբ՝ հետապնդելով քաղաքացիական բնակչությանը իրենց տները լքելուն հարկադրելու նպատակ: Նման դեպքերի վերաբերյալ փաստերն ու դրանց վերլուծությունները ներկայացված են սույն զեկույցի 3-րդ բաժնում:

Զեկույցը պատրաստվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից կատարված ուսումնասիրությունների, տարբեր համայնքներ, կրթական ու առողջապահական հիմնարկներ, քաղաքացիների բնակավայրեր կատարած այցերի, քաղաքացիների հետ ունեցած առանձնազրույցների, պետական լիազոր մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա և նպատակ է հետապնդում փաստագրելու Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի իրավունքների խախտման դեպքերն ու դրանց տարաբնույթ դրսևորումները և միջազգային կառույցների ու իրավապաշտպան կազմակերպությունների ուշադրությունը հրավիրելու Արցախում ստեղծված իրավիճակին:

# Բաժին 1. Հրադադարի ռեժիմի խախտումները և քաղաքացիական բնակչության իրավունքների դեմ ոտնձգությունները

Ռուսաստանի Դաշնության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ադրբեջանի Հանրապետության նախագահի 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո Ադրբեջանի կողմից պարբերաբար խախտվել է հայտարարության[2] 1-ին կետում նշված՝ «կրակի ու ռազմական գործողությունների լիակատար դադարեցման» պայմանը, որի հետևանքով սպանվում են մարդիկ, խախտվում և ճնշվում են մարդու գոյության ու ապրելու համար անհրաժեշտ պարզագույն իրավունքներ:

Արցախա-ադրբեջանական շփման գծի տարբեր հատվածներում ադրբեջանական կողմը դիմում է սադրիչ գործողությունների, կատարում Արցախում ապրող մարդկանց իրավունքները ոտնահարող, կյանքի ու առողջության, սեփականության դեմ ուղղված հանցավոր արարքներ:

44-օրյա պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողության տակ մնացած 108 համայնքներից ավելի քան 30-ը, 15000-ից ավելի բնակչությամբ (Նկար 1) դարձել են սահմանային, որոնց հարևանությամբ՝ մինչև 1.5 կմ հեռավորության վրա տեղակայված են ադրբեջանական մարտական հենակետեր: Հրադադարի հաստատումից հետո այդ հենակետերից ադրբեջանական կողմը պարբերաբար կրակոցներ է արձակել խաղաղ բնակավայրերի ուղղությամբ: 2020թ. նոյեմբերի 9-ից հետո Արցախի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող հայկական բնակավայրերին հարակից հատվածներում տեղակայված հենակետերից Արցախի բնակչության նկատմամբ կատարվել է մարդկային և նյութական խոշոր վնասի հասցրած ավելի քան 100 հանցագործություն, որի հետևանքով սպանվել է 3 քաղաքացիական անձ և 10 զինվորական, սպանության փորձի ենթարկվել 81-ը (31 քաղաքացիական, 50 զինվորական), տարբեր աստիճանի հրազենային վիրավորում է ստացել 38 անձ (10 քաղաքացիական, 28 զինվորական): Մոլորվելու հետևանքով Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներում հայտնված Արցախի Հանրապետության քաղաքացիներից 9-ը ենթարկվել են ֆիզիկական բռնության, 2-ը՝ սպանության սպառնալիքի:

---

[2] Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, http://kremlin.ru/events/president/news/64384, 10.11.2020

Մարտակերտի, Մարտունու, Շուշիի և Ասկերանի շրջանների սահմանային համայնքների բնակիչներին արգելվել են գյուղատնտեսական աշխատանքներն այն վայրերում, որոնք գտնվում են դրանց հարակից ադրբեջանական մարտական դիրքերի կամ հենակետերի դիտարկման տիրույթում: Հետզհետե նվազեցվել, իսկ վերջին շաբաթներին գրեթե ամբողջությամբ վերացվել են ձևավորված և գործնականում լայնորեն կիրառված փոխգործակցության բոլոր հնարավորությունները, ռուս խաղաղապահներին չի տրամադրվում գյուղատնտեսական աշխատանքներ կատարող քաղաքացիական անձանց անվտանգության երաշխիքներ, աշխատանքների կատարման ընթացքում հրաձգային զինատեսակներից արձակվում են կրակոցներ օդ, աշխատողների և գյուղատնտեսական տեխնիկայի, այգիների ու վարելահողերի ուղղությամբ: Այդ սպառնալիքների հետևանքով Արցախի շուրջ 37,000 հեկտար վարելահողից ու այգուց շուրջ 5,000 հեկտարը դարձել են անմշակ՝ մեծ վնասներ հասցնելով հարյուրավոր ընտանիքների ու խորացնելով նրանց սոցիալ-տնտեսական զրկանքները:



Նկար 1. Արցախի՝ 44-օրյա պատերազմի հետևանքով սահմանային դարձած բնակավայրերը

Ադրբեջանական կողմի քարոզչական, ռազմական, հոգեբանական ու տնտեսական բնույթի սպառնալիքներն ու ահաբեկչական գործողությունները առանձնակի ակտիվացել են 2022 թվականի փետրվար-մարտ ամիսներին:

Եթե նախկինում Ադրբեջանի զինված ուժերը կրակում էին հիմնականում մանր տրամաչափի հրաձգային զինատեսակներով, ապա 2022թ. մարտի 7-ից սկսած՝ ահաբեկչական գործողություններին հավելել է բարձր տրամաչափի զինատեսակի կիրառումը:

2022թ. մարտի 7-ից մինչև 12-ը ընկած ժամանակահատվածում ադրբեջանական կողմն Արցախի տարբեր հատվածներում կիրառել է 60 մմ տրամաչափի ականանետ՝ արցախյան կողմի ուղղությամբ արձակելով ընդհանուր 57 արկ: Այդ ընթացքում հրադադարի ռեժիմը շարունակաբար խախտվել է նաև հրաձգային միջոցներից՝ թիրախավորելով նաև բնակելի տներ ու այլ քաղաքացիական ենթակառուցվածքներ:

Նշված ժամանակահատվածում հիմնականում թիրախավորվել են Ասկերանի շրջանի Խրամորթ, Խնապատ, Նախիջևանիկ, Փառուխ և Մարտունու շրջանի Կարմիր շուկա, Թաղավարդ, Խնուշինակ համայնքները[3]:

Արձանագրված դեպքերը և դրանց հանգամանքները ըստ ժամանակագրության ներկայացված են ստորև.

**Մարտի 7 2022թ** - Ժամը 17:30-ի սահմաններում Ադրբեջանի զինված ուժերը 60 մմ ականանետից երեք արկ են արձակել Ասկերանի շրջանի Խրամորթ համայնքի վարչական տարածքի ուղղությամբ: Ականները պայթել են գյուղի գերեզմանատան հարակից հատվածում:

**Մարտի 9 2022թ** - Ժամը 14:20-ի սահմաններում Ադրբեջանի զինված ուժերը 60 մմ տրամաչափի ականանետից չորս արկ են արձակել Մարտունու շրջանի Խնուշինակ համայնքի վարչական տարածքում գտնվող այգիների և մոտակայքում տեղակայված հենակետերի ուղղությամբ, մարդկային կորուստներից խուսափելու համար գյուղատնտեսական աշխատանքները անմիջապես դադարեցվել են:

**Մարտի 9 2022թ** - Ժամը 15:50-ից մինչև 10.03.2022թ. ժամը 06:23-ը տարբեր ժամերի, 16 անգամ 60 մմ տրամաչափի ականանանետից ընդհանուր 24 արկ է արձակվել Ասկերանի շրջանի Խրամորթ և Խնապատ համայնքների վարչական տարածքի ուղղությամբ, մարդկային կորուստներ և գույքային վնաս չի պատճառվել,

---

[3] https://www.facebook.com/messenger_media/?thread_id=100002549498531&attachment_id=1365975613829894&message_id=mid.%24cAAAAAE51Z9eFw8JNBV_knypMfmjV

քանզի գյուղատնտեսական աշխատանքները դադարեցված են և այգիներում աշխատողներ չկան: Մարտի 9-ի լույս 10-ի գիշերը Խրամորթ համայնքի կանայք և երեխաները (շուրջ 150 անձ) տարահանվել են մոտակա գյուղերը:

**Մարտի 9 2022թ** - Ժամը 22:50-ի սահմաններում ադրբեջանական կողմը երկու միավոր տանկ է դուրս բերել Ասկերանի շրջանի Խրամորթ համայնքի հարևանությամբ տեղակայված ադրբեջանական մարտական կետ, որոնք հաջորդ օրը առավոտյան ժամը 07:50-ի սահմաններում հետ են տարվել:

**Մարտի 9-ի երեկոյան ժամերից մինչև 10-ի** առավոտն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի զինված ուժերի կողմից գնդակոծվել ու վնասվել է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Նախիջևանիկ համայնքի վարչական տարածքում գտնվող այգում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելուց հետո հողօգտագործողի կողմից դաշտում կայանված տրակտորը:

**Մարտի 10 2022թ** - Ժամը 10:00-ի սահմաններում ադրբեջանական կողմը 60 մմ տրամաչափի ականանետի կիրառմամբ մեկ արկ է արձակել Խրամորթ համայնքի ուղղությամբ, որի պայթյունի հետևանքով բեկորային վիրավորում է ստացել նույն համայնքի բնակիչ 1971թ. ծնված Սուրեն Բաղրյանը:

**Մարտի 10 2022թ** - Ժամը 10:45-ի սահմաններում երկու արկ է արձակվել նաև Ասկերանի շրջանի Փառուխ համայնքին հարակից անտառների ուղղությամբ, իսկ ժամը 10:55-ի սահմաններում՝ մեկական արկ նույն ուղղությամբ տեղակայված արցախյան հենակետի և Խրամորթ համայնքի ուղղությամբ:

**Մարտի 11 2022թ** - Ժամը 10:00-ի սահմաններում ադրբեջանական կողմը 60 մմ տրամաչափի ականանետից երկու արկ է արձակել Ասկերանի շրջանի Խնապատ համայնքի դպրոցի մոտակայքում տեղակայված ձորի ուղղությամբ: Դասապրոցեսն անմիջապես դադարեցվել և դպրոցականներն ու ուսուցչական անձնակազմն անհապաղ տարահանվել է:

**Մարտի 11 2022թ** - Ժամը 16:00-ի սահմաններում՝ 2-ական արկ պայթել է Խրամորթ և Խնապատ համայնքների վարչական տարածքներում:

**Մարտի 11 2022թ** – Ժամը 16:05, 19:57, 20:54-ին 4 արկ է պայթել Խնապատ համայնքի վարչական տարածքում:

**Մարտի 11 2022թ –** Ժամը 16:20, 16:30, 17:15, 17:20, 17:28, 18:00-ին վեց արկ է պայթել Ասկերան քաղաքի վարչական տարածքում:

**Մարտի 11 2022թ –** Ժամը 12:00-19:00 ընկած ժամանակահատվածում 7 արկ է պայթել Ասկերանի շրջանի Փառուխ գյուղում:

*Նկար 2. Վնասված համայնքային շինություն Փառուխ գյուղում*

*Նկար 3 . Վնասված տրակտոր Նախիջևանիկ գյուղում*

*Նկար 4. Ռազմամթերքի մնացորդներ խաղողի այգում՝ Խրամորթ համայնքում*

*Նկար 5. Վիրավորված քաղաքացիական անձ Խրամորթում*

## Բաժին 2. Գազամատակարարման խափանման հումանիտար հետևանքները

Մարտի 8-ին՝ ժամը 01:00-ից Հայաստանի Հանրապետությունից դեպի Արցախի Հանրապետություն գազամատակարարման միակ խողովակի վնասման հետևանքով Արցախի ամբողջ տարածքը զրկվել է գազամատակարարումից:

Արցախի մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գազատարը վնասված է այն հատվածում, որը գտնվում է ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ, իսկ ադրբեջանական կողմը թույլ չի տալիս իրականացնել վերականգնողական աշխատանքներ: Ուսումնասիրությունների ընթացքում Ստեփանակերտի՝ դեպի Շուշիի հատվածն ընկած թաղամասերի բնակիչներից վկայություններ են ստացվել առ այն, որ այդ գիշերը՝ մոտավորապես նույն ժամին, երբ դադարել է գազամատակարարումը, ուժեղ պայթյուն են լսել: Տարբեր հանգամանքների համադրումից խողովակաշարի վնասման պատճառի գլխավոր կանխավարկածն այն է, որ ադրբեջանական կողմը դիտավորյալ պայթեցրել է խողովակաշարը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ադրբեջանական կողմը խոչընդոտում է «Արցախգազ» ՓԲ ընկերության մասնագետների, Արցախի իրավապահ մարմինների ու Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորակազմի ներկայացուցիչների կողմից վթարի վայրում ուսումնասիրություններ իրականացնելուն, այս պահին հնարավոր չէ հստակ որոշել՝ արդյո՞ք վթարը տեղի է ունեցել տեխնիկական պատճառներով, թե ադրբեջանական կողմի գործողությունների արդյունքում: Այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ վթարի վայրում ուսումնասիրություններ և վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելուն խոչընդոտելը փաստումն է այն բանի, որ ադրբեջանական կողմը ուղիղ դիտավորությամբ զրկում է Արցախի բնակչությանը գազի հասանելիությունից և նպատակ է հետապնդում հումանիտար խնդիրներ հարուցելու Արցախում և խաթարելու բնակչության բնականոն կյանքը:

Գազամատակարարումը հանրապետության ամբողջ տարածքում մարդկանց կողմից օգտագործվում է բնականոն կյանքի կազմակերպման տարբեր բնագավառներում՝ բնակարանների, տների, պետական ու մասնավոր կազմակերպությունների, կրթական և առողջապահական կազմակերպությունների ջեռուցման, տաք ջրով ապահովելու, սննդամթերքի արտադրման և այլ տնտեսական գործունեության մեջ: Ուստի գազամատակարարման խափանման հետևանքով

Արցախում առաջացել են բազմաթիվ հումանիտար բնույթի խնդիրներ[4]: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ քանի որ մարդիկ հիմնականում էլեկտրականության միջոցով են գազի հարուցած դժվարությունները հաղթահարում, էլեկտրամատակարարման համակարգը լրացուցիչ ծանրաբեռնվում է, և արդեն մի քանի անգամ էլեկտրամատակարարման համապետական ու տեղային խափանումներ են եղել՝ սուր հումանիտար խնդիրներ առաջացնելով ջեռուցման ու այլ կարիքների բավարարման հետ կապված:

## 2.1 Բնակչությունը զրկված է ջեռուցումից և տաք ջրից:

Ցուրտ եղանակային պայմաններում, երբ Արցախի տարածքում միջին ջերմաստիճանը տատանվում է -2 - +2 աստիճան ցելսիուսի շրջակայքում և հանրապետության հիմնական մասում օրեր շարունակ ձյուն է տեղում, բնակելի տները, տեղահանված անձանց ժամանակավոր բնակության վայրերը, բոլոր տեսակի կրթական ու առողջապահական հաստատություններն ու մասնավոր ձեռնարկությունները, պետական հիմնարկները զրկված են ջեռուցումից: Հանրապետությունում ներկայումս բնակվող շուրջ 120,000 քաղաքացիներից շուրջ 100,000-ի (80%) տները գազաֆիկացված են, ինչը նշանակում է, որ գազը բնակչության ջեռուցման հիմնական միջոցն է, և այժմ նրանք զրկված են գազով ջեռուցման ու տաք ջրի հնարավորություններից: Գազը բնակարաններում կիրառվում է նաև սնունդ պատրաստելու համար և դրա բացակայությունն ուղիղ ազդում է նաև ընտանիքներում սննդի բնականոն կազմակերպման վրա:

*«Մենք մենակ ենք ապրում 80-ամյա ամուսնուս հետ: Ապրում ենք միայն թոշակով: Տունը տաքացնում էինք գազի վառարանով, մեր ստացած եկամուտը դրան է բավարարում, որ կարողանանք և օրվա հացը գնել, և այս ցուրտ եղանակին տունը տաքացնել: Քանի օր է արդեն գազ չկա, էլեկտրական տաքացուցիչներով էլ տունը չի տաքանում: Տան ջերմաստիճանը առավելագույնը հասնում է մինչև 10 աստիճանի: Ամբողջ օրը վերմակներով փաթաթված ենք, ինչքա՞ն կարելի է այս պայմաններում ապրել: Արդյո՞ք կարելի է այդքան անմարդկային լինել, մեզ համար սա անհասկանալի է»,- նշում է 75-ամյա Անյա տատիկը:*

---

[4] Евронюз, «Нагорный Карабах остался без газа», https://ru.euronews.com/2022/03/11/karabagh-without-gaz?utm_medium=Social&utm_source=Facebook&fbclid=IwAR0chjC_1NlXHsYqG6t0XohYoVPaN0QBU6xcNmyo3XgJ_W-wMUFOFQZbKEg#Echobox=1647033709, 11.03.2022

## 2.2 Ազդեցությունը կրթության իրավունքի վրա

Ջեռուցման խնդիրը մեծապես ազդել է Արցախում կրթական պրոցեսի բնականոն կազմակերպման վրա, քանի որ ուսումնական հաստատությունների՝ մանկապարտեզների, դպրոցների, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների մեջ մեծ թիվ են կազմում գազի օգտագործմամբ ջեռուցվող հիմնարկները:

Հանրապետության դպրոցների 65 %-ը ջեռուցվում են գազի օգտագործմամբ, որում կրթություն է ստանում աշակերտների ընդհանուր թվի 60%-ը: Պատշաճ ջեռուցում ապահովելու անհնարինությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից որոշում է կայացվել հանրակրթական դպրոցներում գարնանային արձակուրդների մեկնարկը տեղափոխել մեկ շաբաթ վաղ՝ մարտի 14-ը[5]:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մանկապարտեզներում երեխաների հաճախելիությունը կազմում է 22%: 12 մանկապարտեզներ ընդհանրապես դադարեցրել են գործունեությունը, քանի որ այլ եղանակով ջեռուցման հնարավորություն առկա չէ: Իսկ մանկապարտեզների մի մասը գործում են կես օրով: Ջեռուցման խնդրից բացի՝ գազամատակարարման խափանումը խնդիրներ է առաջացրել մանկապարտեզներում երեխաների սննդի կազմակերպման գործընթացում: Անձնակազմերը ստիպված օգտագործում են դրսում տեղադրված փայտի վառարաններ և էլեկտրական սալօջախներ սնունդ պատրաստելու համար[6]:

---

[5] ԱՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, https://www.facebook.com/photo?fbid=336473938530932&set=a.299043878940605, 10.03.2022

[6] https://twitter.com/i/status/1503458373785853956

*Նկար 6. Մենդի պատրաստման ընթացքը Ստեփանակերտի մանկապարտեզներից մեկում*

Բարձրագույն ուսումնական հաստատությունների 100 %-ը ևս ջեռուցվում են գազի օգտագործմամբ: Ստեղծված իրավիճակում որոշ ԲՈՒՀ-եր անցել են հեռավար ուսուցման:

Այլ ուսումնական հաստատությունների՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, արվեստի դպրոցների, բժշկական և երաժշտական քոլեջների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների 90%-ը ևս ջեռուցվում են գազի օգտագործմամբ, որոնք ամբողջովին դադարեցրել են իրենց գործունեությունը:

*«9 երեխայի մայր եմ, որոնք այսօր դպրոց չեն գնում: Առանց այն էլ քովիդի պատճառով երեխաներս հետ են մնացել կրթական ծրագրերից: Արմենս արդեն երկրորդ դասարանում է, բայց դեռ չի հասցրել նորմալ տառերը սովորել: Սկզբում համաճարակով պայմանավորված սահմանափակումներ, հեռավար ուսուցում, հետո էլ այս խնդիրը: Փոքր երեխայիս էլ մանկապարտեզ չեմ ուղարկում, սենյակները ցուրտ են, ինքն էլ շուտ հիվանդանում է: Ի՞նչ մեղք ունեն մեր երեխաները, որ նման իրավիճակում են հայտնվում: Ինչո՞վ են տարբերվում այլ երկրների երեխաներից: Նորմալ մանկություն չեն կարողանում ապրել, անընդհատ վտանգի ու հոգեբանական ճնշման տակ, մի կողմից էլ նորմալ կրթություն չեն կարողանում ստանալ»,- նշում է բազմազավակ ընտանիքի մայր Անուշը:*

## 2.3 Ազդեցությունը առողջության պահպանման իրավունքի վրա

Գազամատակարարման խափանումը և պատշաճ ջեռուցման բացակայությունը մեծապես ազդել է նաև առողջապահական համակարգի բնականոն գործունեության վրա: Առողջապահական կազմակերպությունների և հիվանդանոցների 70%-ը

ջեռուցվում են գազի կիրառմամբ, որոնցում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 419 քաղաքացի, այդ թվում մանկական հիվանդանոցում 46 երեխա, իսկ ծննդատանը 51 նորածին և նրանց մայրերը: Չնայած մի շարք հիվանդանոցներ անցել են այլ եղանակով՝ հիմնականում բենզինի և դիզվառելիքի կիրառմամբ և էլեկտրաէներգիայով ջեռուցման, այնուամենայնիվ, Արցախի մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հիվանդասենյակներում պահանջվող ջերմաստիճանն ապահովել չի հաջողվում, դրանցում ջերմաստիճանը տատանվում է 14-15 աստիճան ցելսիուսի շրջակայքում, ինչը ցածր է առողջապահական հիմնակների համար պահանջվող չափորոշիչներից: Բացի դրանից, առողջապահական հիմնակների պատասխանատուները նշում են, որ այլ եղանակով ջեռուցման անցմամբ պայմանավորված մի քանի անգամ աճել են բուժհիմնարկների ծախսերը և որոշակի խնդիրներ են առաջանում ժամանակին մատակարարում ապահովելու տեսանկյունից:

*«Երեխայիս նոր եմ ունեցել, անունը Արսեն ենք դրել: Երբ եկա ծննդատուն արդեն իսկ գազ չկար, բժշկական անձնակազմն անում է ամեն ինչ, որ ինչ-որ ձևով տաքացման հարցը լուծի, բայց միևնույն է սենյակներում ցուրտ է: Վախենում եմ, որ դա անդրադառնա երեխայիս առողջության վրա: Նա հիմա անպաշտպան է և այս պայմաններում եթե հիվանդացավ, վատ հետևանքներ կարող է ունենալ առողջության վրա: Մեր տանն էլ է ցուրտ, չգիտեմ, դուրս գրվելուց հետո, ինչպես եմ կարողանալու տանը նորմալ պայմաններ ապահովել, որ երեխան չմրսի»,- պատմում է նորածնի 24-ամյա մայր Լարիսան:*

## 2.4 Ազդեցությունը տնտեսական գործունեության և աշխատանքի իրավունքի վրա

Գազամատակարարման խափանման հետևանքով խնդիրներ են առաջացել տնտեսության տարբեր ճյուղերի բնականոն գործունեության բնագավառում: Մասնավորապես, մայրաքաղաք Ստեփանակերտում գազի կիրառմամբ ապահովվում է հացի ընդհանուր պահանջարկի զգալի մասը, և շոշափելի դժվարություններ են առաջացել հացի մատակարարման հետ կապված: Հատկանշական է, որ Ստեփանակերտում է կենտրոնացված բնակչության 50 %-ից ավելին, այդ թվում 2020 թվականի ադրբեջանա-թուրքական ագրեսիայի հետևանքով բռնի տեղահանված բնակչության մեծ մասը:

Հանրապետությունում գործող շուրջ 20 գազալցակայաններ չեն աշխատում, ինչի հետևանքով գազալցակայանների սեփականատերերը ֆինանսական կորուստներ են

կրում, իսկ գազալցակայաններում աշխատող հարյուրավոր մարդիկ պարապուրդի են մատնված և զրկված են արժանապատիվ աշխատանքի իրավունքից:

Գազի բացակայությունը մի շարք բացասական հետևանքներ է ունեցել նաև տրանսպորտի ոլորտի վրա: Արցախում շահագործվող մեքենաների մեջ մեծ թիվ են կազմում գազի օգտագործմամբ շահագործվող մեքենաները, ինչը նշանակում է, որ գազամատակարարման բացակայության պայմաններում մեքենայատերերը անցում են կատարել բեզինի և դիզվառելիքի օգտագործմանը, որը լրացուցիչ խնդիրներ ու ծախսեր է առաջ բերել բնակչության համար: Նույն խնդիրներն առկա են նաև ծառայությունների մատուցման ոլորտում: Տաքսի ծառայությունները, որոնք մեքենաները լիցքավորում էին գազով, ստիպված անցել են բենզինի, որի հետևանքով աճել է մատուցվող ծառայությունների գները[7]:

Տնտեսական գործունեություն ծավալող հարյուրավոր ձեռնարկատերեր ևս մեծ կորուստներ են ունենում գազամատակարարման խափանման հետևանքով: Հատկապես մեծապես տուժել են գազամատակարարման օգտագործմամբ աշխատող ջերմոցներն ու ջերմատները:

*«Ջերմոցի ջեռուցման համակարգը գործում է գազով: Արդեն մի շաբաթ է պահանջվող ջերմաստիճան չենք կարողանում ապահովել: Նոր աճող բանջարեղենը ցրտահարվում է, իսկ պահեստներում ամբարած ապրանքն էլ տեղում փչանում»,- նշում է Ասկերանում ջերմոցային տնտեսության սեփականատեր Գոռը:*

## 2.5 Ազդեցությունը էկոլոգիայի և աղբահանության վրա

Գազամատակարարման բացակայության պայմաններում, տների ջեռուցման և այլ կենսական պայմանների ապահովման համար նկատվում է բնակչության կողմից փայտանյութի օգտագործման ծավալների մեծացում, ինչը նշանակում է, որ առանց այն էլ սահմանափակ անտառային ֆոնդը լուրջ կորուստներ է ունենալու, որը միանշանակ ազդելու է էկոլոգիայի վրա:

Ստեփանակերտի քաղաքապետարանից և բոլոր շրջանների վարչակազմերից ստացված տեղեկատվության համաձայն՝ համայնքներում առաջացել է նաև աղբահանության հետ կապված խնդիրներ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ աղբահանության համար օգտագործվող մեքենաներն ու տեխնիկան աշխատում են հիմնականում գազի օգտագործմամբ և դրանք այլ վառելանյութով փոխարինելու հնարավորություն չկա:

---

7 Արցախի հանրային հեռուստատեսություն, «Գազալցակայանները՝ առանց գազի», https://fb.watch/bJZAGAZXT9/, 12.03.2022

Զեկույցի պատրաստման փուլում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը տեղեկություն է ստացել, որ տարված բանակցությունների արդյունքում ադրբեջանական կողմը սկսել է գազատարի վթարված հատվածի վրա վերականգնողական աշխատանքները:

## Բաժին 3. Հոգեբանական ահաբեկչություն և տեղեկատվական հարձակումներ

2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ընդունումից հետո ադրբեջանական կողմը բազմիցս դիմել է հոգեբանական ահաբեկչական գործողությունների, որոնք նպատակ են հետապնդել ընկճելու, վախի և հուսալքության մթնոլորտ տարածելու Արցախի խաղաղ բնակչության շրջանում: Արցախի բնակչությանն ահաբեկելու համար ադրբեջանական կողմը լայնորեն կիրառում է տարբեր գործիքներ: Շփման գծի տարբեր հատվածներում հրաձգային զինատեսակներից տարբեր համայնքների ուղղությամբ թիրախավորված և ազատ կրակոցներ արձակելու[8], գիշերային ժամերին լուսարձակներով համայնքի բնակիչների տները լուսավորելու, գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը խոչընդոտելու ամենօրյա դեպքերին վերջին օրերին գումարվել է քարոզչական բնույթի ահաբեկչությունը:

Փետրվարի 24-ից սկսած Արցախի Հանրապետության տարբեր համայնքների հարևանությամբ տեղակայված դիրքերից ադրբեջանական կողմը սպառնալիք պարունակող կոչեր է ուղղում խաղաղ բնակիչներին: Բարձրախոսներով կահավորված ռազմական մեքենաները մոտենում են համայքների հարևանությամբ գտնվող բարձունքներին և միացնում հետևյալ բովանդակությամբ ձայնագրություններ. «*Դուք գտնվում եք Ադրբեջանի Հանրապետության տարածքում: Այստեղ իրականացվող ցանկացած գործողություն կարգավորում է Ադրբեջանի օրենքներով: Այն ամենը, ինչ անում եք առանց պաշտոնական թույլտվության, անօրինական է: Ներկայումս ձեր կողմից իրականացվող գյուղատնտեսական աշխատանքներն անօրինական են: Մի պատրաստվեք պատերազմի և մի փորձեք սահման ստեղծել մեր տարածքում: Եթե ցանկանում եք մնալ ու ապրել այստեղ, հնազանդվեք Ադրբեջանի օրենքներին: Հաշվի առնելով ձեր անվտանգությունը՝ պահանջում ենք դադարեցնել աշխատանքը և անհապաղ հեռանալ տարածքից, հակառակ դեպքում ձեր նկատմամբ ՈՒԺ ԿԿԻՐԱՌՎԻ, կորուստների համար*

---

8 Արցախի Հանրապետության դատախազություն, «Ադրբեջանական կողմը շարունակում է լարված պահել մթնոլորտը», https://m.facebook.com/ProsecutorsOfficeoftheRepublicofArtsakh/posts/174483938237820?_rdr, 06.03.2022

*պատասխանատվությունը ընկնելու է ձեր վրա: Մի վտանգեք ձեր և ձեր ընտանիքի անդամների կյանքը: Լքեք տարածքը, լքեք տարածքը*[9]»:

Ահաբեկման այս մեթոդը առաջին անգամ կիրառվել է փետրվարի 24-ին, Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի բնակիչների նկատմամբ, այնուհետև ադրբեջանական կողմը նույն գործողություններն իրականացրել է այլ համայնքների՝ Մարտունու շրջանի Կարմիր շուկա, Թաղավարդ, Ասկերանի շրջանի Խնապատ, Նախիջևանիկ, Փառուխ և այլ համայնքների բնակիչներին ահաբեկելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ Խրամորթ և Կարմիր շուկա կատարած այցերի ժամանակ համայնքի բնակիչները նշել են, որ սպառնալիք պարունակող այդ կոչերի և պարբերաբար հնչող կրակոցների պատճառով հիմնականում ահաբեկվում են երեխաները: Ծնողները երեխաների անվտանգության մտահոգություններից ելնելով երեխաներին չեն ուղարկում մանկապարտեզ և դպրոց, սրանով իսկ խաթարվում է համայնքի երեխաների պատշաճ կրթություն ստանալու իրավունքը: Այս սպառնալիքների ներքո չեն իրականացվում նաև գյուղատնտեսական աշխատանքներ, որը գյուղական բնակչության ապրուստի հիմնական միջոցն է: Դրանով իսկ բնակչությունը զրկվել է արժանապատիվ աշխատանքով սեփական ապրուստը հոգալու հնարավորությունից:

*«Այդ ձայնագրությունները հոգեբանորեն ազդում են երեխաների վրա, նրանք չեն կարողանում դասերի մասնակցել: Մենք՝ ծնողներս անհանգիստ ենք, ինչպե՞ս կարելի է այդ պայմաններում հանգիստ երեխային ուղարկել դասի, երբ չգիտես ամեն վայրկյան ինչ կարող է լինել: Ադրբեջանցիները սպառնում են, որ ուժ կկիրառեն, իսկ մենք գիտենք, որ նրանք ամեն ինչի պատրաստ են, տեսել ենք, թե ինչ վայրագություններ են արել 44-օրյա պատերազմի ժամանակ: Երեխաներն անգամ իրենց բակերում հանգիստ խաղալ չեն կարող, սա ինչ մանկություն է, որ նրանք են ապրում»,- նշում է Խրամորթի 35-ամյա բնակիչ, 4 երեխաների մայր Գոհարը:*

*«Մենք մեր տանն ենք, մեր հայրենիքում, բայց ամեն օր ենթարկվում ենք ահաբեկման: Մեր տնից երևում է նրանց դիրքերը, որտեղից ամեն օր մի քանի անգամ կրակում են: Մենք ուզում ենք ապրել մեր հայրենիքում, բայց չենք ուզում, որ մեր*

---

9 Արցախի մարդու իրավունքների պաշտպան, «Ասկերանի շրջանի Խրամորթ համայնքում ադրբեջանցիների կողմից բարձրախոսներով հայ բնակչությանն ուղղված «կոչերն ու հորդորները» բնակչությանն ահաբեկելու ուղիղ դիտավորություն ունեն», 26.02.2022, https://www.facebook.com/100003582698868/videos/pcb.4603428943119817/1299977423840281

*երեխաները ամեն օր վախի մեջ լինեն: Կրակոցների պատճառով մի քանի շաբաթ փակվել էր մանկապարտեզը, երեխաներին չենք կարող թողնել, որ խաղան բակում, որովհետև բակն ամբողջությամբ նրանց դիքերից դիտարկվում է: Աստված գիտի, թե ինչ կարող են անել: Նրանցից ամեն ինչ սպասելի է: Մենք ուղղակի չենք հասկանում՝ ինչու է աշխարհն այսքան անտարբեր մեր նկատմամբ»,- նշում է Կարմիր շուկայի 38-ամյա բնակիչ, 3 երեխաների մայր Աննան:*

Հավաքագրված փաստերը վկայում են, որ գյուղերի բնակչությանն ահաբեկելու ադրբեջանական հերթական գործողությունները իրականացվում են հատուկ պլանավորված եղանակով և ադրբեջանական ղեկավարության ուղիղ համակարգմամբ: Դրանք Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի հոգեբանական անձեռնմխելիության դեմ ուղղված գործողություններ են, ինչի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այսպես կոչված «կոչերն ու հորդորները» տեսաձայնագրվում ու սոցիալական ցանցերում տարածվում են 44-օրա պատերազմի օրերին և դրանից հետո ադրբեջանական քարոզչությունն իրականացնող սոցցանցային ալինքներով[10]:

Սրան զուգահեռ Արցախի ժողովրդի դեմ հոգեբանական ահաբեկչության գործողություններն ակտիվացել են նաև սոցիալական մեդիա տիրույթում: Ադրբեջանցիները տեղադրում են հին, մասնավորապես՝ 44-օրյա պատերազմի ժամանակ նկարահանված դաժան տեսանյութեր, որոնք հատուկ թիրախավորված տարածում են հայ օգտատերերի շրջանում:

Միևնույն ժամանակ Ադրբեջանի Պաշտպանության նախարարությունը Արցախի տարբեր համայնքների դեմ հանցավոր գործողություններ իրականացնելուց առաջ տարածում է ապատեղեկատվություն իբր Արցախի պաշտպանության բանակի զորամիավորումները խախտել են հրադադարի ռեժիմը և կրակ բացել այս կամ այն ուղղությամբ՝ դրանով իսկ հող նախապատրաստելով տարբեր ուղղություններով ռազմական գործողություններ նախաձեռնելու համար:

Մարտի 11-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի ֆեյսբուքյան պաշտոնական էջը ենթարկվել է կիբեռհարձակման, ինչ հետևանքով կարճ ժամանակով էջը հայտնվել է ադրբեջանական հաքերների վերահսկողության տակ: Այդ հնարավորությունն ադրբեջանցիներն օգտագործել են հերթական անգամ Արցախի խաղաղ բնակչությանն ահաբեկելու, նրանց իրենց հայրենի տներից շտապ հեռանալու, հակառակ դեպքում ուժ կիրառելու սպառնալիքներ տարածելու համար:

---

10 https://www.facebook.com/Caliber.az/videos/5129718323745410, https://www.facebook.com/Caliber.az/videos/361354478963864

Նկարում պատկերված է ադրբեջանցիների տնօրինման տակ հայտնված ժամանակահատվածում նրանց կողմից Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական ֆեյսբուքյան էջով տարածված ահաբեկչական բնույթի հայտարարությունը, որով հայերին կոչ է արվում լքել «Ադրբեջանի գրավյալ տարածքները, հակառակ դեպքում ոչնչացվելու են բոլոր հայ զինծառայողները»:




*Նկար 7. ԱՀ Ազգային ժողովի ֆեյսբուքյան պաշտոնական էջը կիբեռհարձակման ենթարկվելուց հետո*

Նույնաբովանդակ գրառումներ ու մեկնաբանություններ են տարածվում նաև ադրբեջանցի ֆեյսբուքյան օգտատերերի կողմից: Նկար 8-ում ներկայացված է ադրբեջանցի օգտատիրոջ մեկնաբանությունը, որով հայերին կոչ է արվում անհապաղ հեռանալ, այլապես ադրբեջանական բանակը բոլորին կոչնչացնի:




*Նկար 8. Ադրբեջանցի օգտատիրոջ մեկնաբանությունը*

Բնակչությանը նշված մեթոդներով ահաբեկելուն ուղղված գործողություններից բացի ադրբեջանական կողմը պարբերաբար դիմում է Արցախի տարածքում բջջային կապը և ինտերնետի հասանելիությունը խլացնելու գործողությունների: Նախորդ մեկուկես տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հայտարարություններով՝ նշելով, որ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բջջային կապն ու ինտերնետը պարբերաբար խափանվում են ադրբեջանցիների կողմից հատուկ խլացուցիչների կիրառմամբ, ինչը խոչընդոտներ է ստեղծում Արցախի ժողովրդի՝ հեռախոսային և հաղորդակցության այլ ձևերից օգտվելու ազատության և տեղեկացված լինելու իրավունքի համար: